նի և նորածնի անկողինը։ Քաշկը երկունքի ժամանակ աշխատում էր կնոջ ծիգարը պոկել և ուտել։

Ծննդկանը ազատվում էր խոտի կամ ծղոտի վրա չոքած վիճակում, խոտն ու ծղոտը նաև ուրիշ ազգերի մեջ պաշտպանում էր գետնին վխտող չար ոգիներից[111]։ Ավելի էր պաշտպանում մաղը։ Եթե այդ տանը նորածին երեխա չէր մնում, նոր տղաբերքի ժամանակ ծննդկանին չոքացնում էին այնպես, որ երեխան ընկնի մաղի մեջ և երեխային էլ ծնվելուց հետո պառկեցնում էին ոչ թե օրորոցի, այլ մաղի մեջ։ Ծննդկանին երբեք չէին թողնում մենակ—չլինի թե խապրպրուշ քաշկերը նրա վրա հարձակվեն, տկարացնեն, նույնիսկ մահ պատճառեն կամ նորածնին փախցնեն կամ փոխեն։ Ակամա վերհիշում եմ Մ. Խորենացու պատմածը Արտավազդի մասին, թե ժողովրդի մեջ ավանդվում էր, որ քաջքերը՝ վիշապազունք ծննդկան Սաթենիկի մոտից գողացան Արտաշես թագավորից նրա ծնած տղային և «դև փոխանակ եդին»[112]։ Երեխային գողանալու վտանգը շարունակ կար։ Գիշերը երեխային դուրս տանելիս ձեռքը պետք էր ածուխ տալ։ Նրա օրորոցը քաշկերից պահպանելու համար պողպատե իրի հետ մի շորի մեջ փաթաթում էին նաև ածուխ, դնում գլխի տակ։ Նրա օրորոցին կախում էին զանազան հմայիլներ, մանավանդ կապույտ ñíòíãf։ Եթե տան մեջ ծնված երեխաները մեռնում էին, այսինքն՝ քաշկերն այդ տան հետ թշնամացած էին և երեխա չէին թողնում՝ յոթ տնից, որտեղ ծննդաբերության ընդունակ կանայք մեռած չեն, կտորներ էին հավաքում և նորածնի համար շոր կարում, որ քաշկը չկարողանա կտորի հիման վրա ջոկել, թե ո՞ր տան երեխա էր։ Քաշկերը վտանգավոր էին ծննդկանի համար նրա ամբողջ քառասունքի ընթացքում, տանից առաջին անգամ դուրս գալուն և առաջին անգամ ջրի գնալուն։ Այդ պատճառով ծննդկանը տանը մառան գալիս կամ բատվերի մեջ դուրս գնալիս շամփուրը ձեռքն էր առնում և քայլում էր նրա սուր ծայրով գետնին քաշկերին խողխողելով։ Առաջին անգամ ջրի գնալիս նա պիտի իր հետ վերցներ շամփուր կամ որևէ պողպատե կտոր և աղբյուրին ցորեն կամ գարի ցաներ։ Այդպիսով ջրի մեջ հավաքված քաշկերը հեռացվում էին, անվտանգ դարձվում։

Քաշկերի դեմ էֆեկտիվ էին նույնպիսի միջոցներ, որոնք գործադրվում էին իրոք ֆիզիկապես գոյություն ունեցող էակների դեմ։ Նրանց կարելի էր՝

բռնել, աշխատեցնել.

կարելի էր ոտքի տակ ջարդել.

հարսանիքի ժամանակ տուն մտնող նորապսակ զույգի ոտքի տակ ամանի հետ կոխոտել.

ձիու սմբակներով կոխոտել ծանր տղաբերքի ժամանակ.

ջրի մեջ խողխողել.

քշել տհաճ հոտով.

գետնին զամել.

այրել գիշերը ավելի ծայրին.

կարելի էր քաշկերի մերձենալն արգելել վտանգվող մարդու կամ խմբի շուրջն օղակ գծելով կամ օղակ կազմելով տղաբերքի, հարսանիքի ժամանակ.

---

111 *Кагаров Е. Г.*, Состав и происхождение свадебной обрядности, Сборник музея антропол. и этнографии, том VIII, Л., 1929, էջ 175։

112 *Գ. II, գլ. ԿԱ։*